

համակարգ, որը, մի կողմից հաշվի կառնի դրա առանձին ճյուղերի գործունեության առանձնա-
հատկությունները, իսկ մյուս կողմից կնպաստի շուկայական տնտեսավարման սկզբունքների
արդյունավետ կիրառմանը:

Այսպիսով, կարելի է պնդել, որ քաղաքային տնտեսության զարգացումն ուղղակիորեն
այայնանալորված է համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ և արդյունավետ
գործունեությամբ, ինչի ապահովմանն էլ պետք է ուղղված լինի քաղաքային իշխանությունների
կողմից իրականացվող քաղաքականությունը:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պետության տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից է տարածքային
քաղաքականությունը, որն, ըստ էության, պետության կողմից նրա վարչատարածքային միա-
վորներում սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորմանն ու զարգացմանն
ուղղված միջոցառումների, գործողությունների ու քայլերի, ինչպես նաև դրված նպատակների
հասնելու սկզբունքների, լծակների ու մեթոդների համալիր է: Այս համատեքստում խիստ
կարևորվում են առանձին վարչատարածքային միավորների արդյունավետ զարգացման
խնդիրները, որոնց լուծումն ակնհայտորեն կապահովի էական առաջընթաց երկրի սոցիալ-
տնտեսական զարգացման համար՝ ստեղծելով համապատասխան նախադրյալներ:

Տվյալ բնագավառի զարգացման քաղաքականությամբ նախատեսված միջոցառումների
կատարման անհետևանքայնությունը, տարածքային զարգացման ռազմավարության, ինչպես
նաև հիմնավոր սկզբունքների և մոտեցումների բացակայությունը հանգեցրին հանրապետու-
թյան տարածքային զարգացման խիստ բևեռացմանը և սոցիալ-տնտեսական իրավիճակի
վատթարացմանը: Այս հանգամանքն ուղղակիորեն ու մեծապես նպաստեց հանրապետության
տարածքում բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմանը և առկա ռեսուրսների ոչ
ռացիոնալ օգտագործմանը: Դա, իր հերթին, այայնանալորված էր նաև նրանով, որ տնտեսա-
կան նոր հարաբերություններին անցման ամբողջ ժամանակահատվածում իրականացվող
բարեփոխումների հիմքում չդրվեցին հիմնավոր ու համալիր լուծումներ ենթադրող մոտեցումներ:

Տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է առանձին տարա-
ծաշրջանների զարգացմանն ուղղված համալիր և ամբողջական ծրագրի մշակումը, որով
կսահմանվեն այդ ուղղությամբ քաղաքականության հիմնական ուղղությունները, դրանցով
այայնանալորված գերակայությունները, ինչպես նաև նախատեսվող միջոցառումները և դրանց
իրականացման ժամանակացույցը:

Հանրապետությունում տարածքային զարգացման տեսանկյունից հատկապես կարևոր-
վում է քաղաքների զարգացումը, որոնցում է տեղաբաշխված մարդկային, արտադրական և
կառավարչական ռեսուրսների զգալի մասը: Նման հանգամանքը ակնհայտորեն բարձրացնում
է քաղաքի գլխավոր հատակագծի մշակման և հաստատման կարևորությունը, որը քաղա-
քաշինական զարգացման պլանավորման հիմնական փաստաթուղթն է: Վերջինիս հիմնական
նպատակներն են՝ քաղաքի կայուն զարգացման և կենսագործունեության բարենպաստ միջա-

վայրի ստեղծումը, էկոլոգիական անվտանգության ապահովումը և բնության ու մշակութային ժառանգության պահպանումը: Գլխավոր հատակագիծը քաղաքային ենթակառուցվածքների զարգացման առաջնահերթ և հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման, շրջակա միջավայրի պահպանման և զարգացման, արտադրական տարածքների վերակազմակերպման և բնակարանների վերակառուցման, հասարակական, գործարար և մշակութային կենտրոնների, տուրիզմի և հանգստի օբյեկտների, քաղաքային միջավայրի գեղագիտական կազմակերպման և համալիր բարեկեցության, վարչական շրջանների տարածքների զարգացման, քաղաքաշինական պլանների մշակման և իրականացման, քաղաքի կառուցման և պլանավորման նախագծերի համար հիմքն է:

Սոցիալ-տնտեսական նոր պայմաններում գլխավոր հատակագծի բովանդակությունը էականորեն փոխվում է, ինչը պայմանավորված է շուկայական տնտեսության և արտադրության միջոցների վրա մասնավոր սեփականության ընդունման, գործունեության օրենսդրական հարաբերությունների պայմաններում տնտեսության պլանավորման նախկին՝ ճյուղային սկզբունքներն այլևս չեն գործում և իրենց տեղը զիջել են տարածքային մոտեցումներին: Քաղաքացիների կայունաբնակության փաստացի վերանալը, բնակության վայրի, բնակարանի, աշխատանքի և ծառայությունների ընտրության ազատությունը հիմնովին փոխել են հեռանկարային պլանավորման հայեցակարգային մոտեցումները:

Նման պայմաններում գլխավոր հատակագծի մշակումը պետք է համապատասխանի բնակավայրերի կայուն զարգացման պահանջներին, որոնք սահմանված են միջազգային մի շարք փաստաթղթերով: Հատակագծի մշակման հիմնական նպատակը պետք է դառնա այնպիսի զարգացման պլանավորումը, որը կբավարարի ներկա սերնդի պահանջումները՝ չվտանգելով ապագա սերունդների զարգացման հնարավորությունները:

Կայուն զարգացման հայեցակարգի հիմքում պետք է ընկած լինեն բնակեցված միջավայրի բոլոր բաղադրիչների հավասարակշիռ զարգացման և հումանիզացման, ռեսուրսախնայողության, դեմոկրատական ինստիտուտների, կայուն զարգացման քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ իրավական և տնտեսական մեխանիզմների ստեղծման սկզբունքները:

Քաղաքի գլխավոր հատակագծի մշակումը պետք է իրականացվի բոլոր մակարդակների քաղաքաշինական համակարգերի հոսսալիության ապահովման հաշվառմամբ (քաղաքը՝ ամբողջությամբ, համայնքը՝ որպես հատակագծային շրջան, գործառության ինքնակառավարման տարածքներ, միկրոշրջաններ, թաղամասեր, հատակագծային կառուցվածքի առանձին տարրեր), որոնք ընդունակ են կանոնավոր գործել ինչպես սովորական, այնպես էլ արտակարգ պայմաններում և նպաստել անվտանգ, էկոլոգիապես մաքուր բնակելի միջավայրի կազմավորմանը:

Այդ համատեքստում հատկապես կարևորվում են.

- տարածքի ռացիոնալ օգտագործման և հատակագծային կառուցվածքի օպտիմալ չափերի ընտրությունը,
- ինժեներական և տրանսպորտային ալյընտրանքային համակարգերի ստեղծումը,
- տարածքների ինժեներական պաշտպանության և շենքերի ու կառույցների սեյսմակայունության բարձրացման միջոցառումների մշակումը,
- ենթակառուցվածքների հատակագծային լուծումների ժամանակ արտակարգ իրավիճակներում քաղաքի կենսագործունեության ապահովման հաշվառումը:

Քաղաքի զարգացման գլխավոր հատակագիծը պետք է մշակվի տարածքի օգտագործման վերլուծության, քաղաքաշինական զարգացման վիճակի և այլ խոշոր ազդուեցություն կենտրոնների հետ համեմատական վերլուծության, ինչպես նաև տվյալ քաղաքի և այլ տարածաշրջանների քաղաքաշինական զարգացման փոխկապակցված պայմաններից, տնտեսական և

սոցիալական երկարաժամկետ զարգացման հեռանկարներից, քաղաքի տարածքի քաղաքաշինական կազմակերպմանը ներկայացվող էկոլոգիական և պատմամշակութային պահանջներից ելնելով:

Քաղաքի զարգացման գլխավոր հատակագիծը պետք է ներառի հետևյալ սկզբունքային բաժինները.

1. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունները,
2. տարածքի քաղաքաշինական գոտիավորումը,
3. քաղաքաշինական առաջնահերթ միջոցառումների ծրագիրը,
4. քաղաքաշինական զարգացման առանձնահատկությունները՝ տվյալ քաղաքին վերապահված գործառնությունների իրականացման մասով:

Գլխավոր հատակագիծը պետք է հիմնված լինի այնպիսի վերլուծական և կանխատեսումային նյութերի վրա, որոնք բնութագրում են տվյալ քաղաքի սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման նախադրյալները (քաղաքի և այլ տարածքների փոխադարձ կապերը, ժողովրդագրության ու տնտեսության և զբաղվածության կառուցվածքային փոփոխությունների միտումները, համախառն տարածքային արդյունքի, եկամուտների և բնակչության սպառողական պահանջարկի դինամիկան): Գլխավոր հատակագծի սոցիալ-տնտեսական հիմնավորումները պետք է բխեն քաղաքի զարգացման ներքին ներուժի բացահայտման և այն բնակիչների շահերին համապատասխան օգտագործելու անհրաժեշտությունից:

Քաղաքաշինական զարգացման նպատակը քաղաքի պատմամշակութային, լանդշաֆտային, ճարտարապետական ինքնատիպության պահպանումն ու բազմապատկումը, ներկա և ապագա սերունդների համար անվտանգ, կենսագործունեության համար բարենպաստ և բազմաձև քաղաքային միջավայրի ստեղծումն է: Գլխավոր հատակագծի հիմնարար արժեքներ և պայմաններ պետք է լինեն.

- մշակութային ժառանգության և բնական հարստությունների մնայուն նշանակությունը,
- քաղաքային միջավայրի հարմարավետության և անվտանգության երաշխիքների հիմնարար դերը, քաղաքային բարիքների հասանելիությունը, մարդու կողմից կենսագործունեության պայմանների ընտրության հնարավորությունները,
- ապագա սերունդների և քաղաքային բնակչության շահերի հավասարությունը:

Տնտեսական նոր հարաբերությունների պայմաններում, անշուշտ, էականորեն փոխվում են պատկերացումները քաղաքի տրանսպորտային, ինժեներական, տեղեկատվական և սոցիալական ենթակառուցվածքների վերաբերյալ: Ներկա փուլում դրանք քաղաքի զարգացման գլխավոր ռեսուրսն են, նրա մրցունակության բարձրացման, հասարակական և ներդրումային գրավչության կարևոր պայմանը:

Քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման աճի տեմպերը մեծապես կանխորոշում են քաղաքաշինական գործունեության ուղղությունները, հնարավորությունները, տալիս անհրաժեշտ ծավալներով իրականացնել բնակարանային և կենցաղային-մշակութային շինարարություն, աստիճանաբար վերականգնել և բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Այս առումով քաղաքի զարգացման գլխավոր հատակագծում պետք է նշվեն հիմնական սոցիալ-տնտեսական և քաղաքաշինական նպատակները և չափանիշները, որոնք ձեռք կբերվեն արդյունաբերության, սոցիալական ոլորտում, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և մյուս ճյուղերում ու ոլորտներում խոշորամասշտաբ ծրագրերի իրականացման արդյունքում:

Ներկայումս որակական նոր խնդիրներ են կանգնած արտադրական ոլորտի առջև, որտեղ զարգացման հիմնական ուղղությունը պետք է լինի գիտատար և էկոլոգիապես մաքուր արտադրությունների ստեղծումը: Պետք է քայլեր ձեռնարկել արտադրության վերակառուցման, մրցունակ արտադրանքի արտադրության, բարձր որակավորում ունեցող կադրերի արդյունավետ պատրաստման ու օգտագործման և աշխատավարձի բարձր մակարդակ երաշխավորող ու

բնակչության իրական զբաղվածությունն ապահովող աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ: Կարևորվում են նաև քաղաքաշինական զարգացման բնապահպանական պահանջները, որոնք պետք է սահմանվեն քաղաքի կայուն զարգացման, սոցիալ-տնտեսական և բնապահպանական պահանջմունքների հաշվեկշռման, արդյունավետ բնօգտագործման, էկոլոգիական իրավիճակի բարելավման և կայունացման կողմնորոշման հիման վրա: Քաղաքաշինական զարգացման գործընթացում բնապահպանական քաղաքականության կատարելագործման հիմնական նպատակը պետք է դառնան շրջակա միջավայրի վրա թույլատրելի սահմաններում ատրոպոգեն ազդեցության նվազեցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, բնակչության կյանքի համար բարեկեցիկ պայմանների ձևավորումը և քաղաքային էկոհամակարգերի կենսաապահովման գործառնությունների արդյունավետ իրականացումը:

Քաղաքի զարգացման գլխավոր հատակագիծը պետք է հատկապես կարևորի տրանսպորտային խնդիրների լուծումը: Հարկ է նշել, որ հատկապես Երևանի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրներից մեկը քաղաքի ինտենսիվ ավտոմոբիլիզացիան է: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է ավելացնել ճանապարհատրանսպորտային ցանցի խտությունը, քաղաքային մայրուղիների ձգվածությունը, շրջանների և բնակելի փողոցների ցանցի խտությունը, կառուցել թունելներ, արտափողոցային հետիոտն անցումներ, որոնք կապահովեն կարևոր մայրուղիների երթևեկության անընդհատ ռեժիմը: Պետք է կարևորել այնպիսի կամուրջների կառուցումը, որոնք կապահովեն քաղաքի տարածքի միասնականությունը և նրա առանձին մասերի միջև հուսալի կապերը: Պետք է վերակառուցել ճանապարհատրանսպորտային ցանցը դրա թողարկման ծավալի մեծացման նպատակով, ստեղծել երթևեկության վերահսկողության և կարգավորման ժամանակակից ինֆորմացիոն համակարգեր, կազմակերպել երթևեկության սահմանափակ ռեժիմով գոտիներ (ըստ ավտոտրանսպորտի տեսակների, օրվա ժամերի և օրերի, ինչպես նաև ելքի, մուտքի և կանգառի), ստեղծել հետիոտն գոտիների, փողոցների, հրապարակների և կանգառների ճյուղավորված ցանց, որոնք մեկուսացված կլինեն տրանսպորտային հոսքերից, զարգացնել ավտոմեքենաների պահպանման և կանգառի, ինչպես նաև ավտոսերվիսի համակարգերը:

Գլխավոր հատակագիծը պետք է նախատեսի նաև բնակչության բնակարանային պայմանների և կուլտուր-կենցաղային սպասարկման շարունակական բարելավում՝ հաշվի առնելով տարբեր տարիքային և սոցիալական խմբերի պահանջները: Դա ենթադրում է այնպիսի նախադրյալների ապահովում, ինչպիսիք են.

- նոր աշխատատեղերի ստեղծումը և բնակչության զբաղվածության աճը,
- սոցիալական, առևտրի, գիտության և գիտական սպասարկման ոլորտներում զբաղվածության առաջանցիկ աճը,
- բնակելի ֆոնդի ծավալի ավելացումը,
- բնակարանային և առևտրի ոլորտի օբյեկտների շինարարության մեջ կապիտալ ներդրումների առաջանցիկ աճը:

Միաժամանակ անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել բնակչությանը սոցիալական սպասարկման մատչելի և որակյալ ծառայություններ մատուցող օբյեկտների ցանցի զարգացման ուղղությամբ: Ընդ որում, պետք է իրականացվեն ծրագրերի երկու հիմնական ձևեր՝ մարդու առողջության (ֆիզիկական, հոգևոր և ինտելեկտուալ) պահպանմանը և նրա բազմաբնույթ պահանջմունքների բավարարմանն ու սոցիալական և առևտրային ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրեր: Գլխավոր հատակագիծը պետք է նախատեսի նաև սոցիալական ենթակառուցվածքների ֆոնդի ավելացում: Սոցիալական ոլորտի օբյեկտների գերակշիռ մասը պետք է տեղաբաշխվի բնակելի տարածքներին մոտ, իսկ առևտրայինը՝ համաքաղաքային կենտրոններին մոտ:

Ամփոփելով պետք է նշել, որ քաղաքային զարգացման խնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռք են բերում մեծ կարևորություն, իսկ դրանց լուծումը պահանջում է ծրագրային մոտեցում, ինչի ապահովմանն էլ պետք է ուղղված լինի գլխավոր հատակագիծը:

ՏԱՏՅԱՆԱ ՕՅԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ՀՀ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման և տնտեսության շուկայացման գործընթացների բարելավման խնդիրների լուծումը պահանջում է մշակել ձեռնարկությունների արտադրության ներդրումային գործընթացի կազմակերպման ռազմավարության հիմնական ձևերը:

Այդպիսի հետազոտությունների խնդիրը պահանջում է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառումը թույլ կտա ներդրումների ներգրավման միջոցով կանխատեսել ձեռնարկության և ճյուղի ներուժի արդյունավետ օգտագործման ուղիները: Հարկ է նկատել, որ ռազմավարության լուծումների հասկացության հետ սերտորեն կապված է նաև ձեռնարկության ներդրումային ներուժի հասկացությունը:

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նախ այն, որ ներդրումային գործընթացի ռազմավարությանը պետք է վերաբերել այն ներդրումային ռեսուրսների կառավարումը, որոնց ծավալն ու կառուցվածքը կարող է էապես փոխվել միայն նորամուծության կառուցվածքային փոփոխությունների դեպքում: Երկրորդ՝ ձեռնարկության ներուժի ռազմավարության բնորոշման համար անհրաժեշտ է ընտրել ներդրումների այն ոլորտները, որտեղ պետք է ընթանա դրանց գործունեությունը:

Հանրապետության տնտեսության զարգացման այժմյան պայմաններում ձեռնարկությունների արտադրական ներդրումների ներուժի ռազմավարությունն անհրաժեշտ է իրականացնել արտադրական ներդրումների պլանավորման և օգտագործման կառավարման ուղղությամբ, որոնք կարող են ապահովել ձեռնարկության մրցունակությունը, առաջադիմական տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրումը: Այդ խնդիրների լուծման առումով էլ առաջանում է ռեսուրսների ռազմավարական խնդիրների առաջադրման անհրաժեշտությունը¹, որոնք կարելի է դասակարգել երեք խմբի.

- ձեռնարկության ներուժի օգտագործման ռազմավարությունը՝ կապված ներքին շուկայի պահանջարկի բավարարման և արտադրական ներդրումների սահմանափակման հետ,
- ձեռնարկության ներուժի մասնակի վերակառուցումը՝ կապված մրցունակության պայմանների ստեղծման և ներուժի նորացման հետ,
- ձեռնարկության վերարտադրության ներդրումների և արտադրանքի արտահանման ապահովումը՝ կապված նրա վերապրոֆիլավորման ու ֆինանսական կայունության գործոնների ստեղծման հետ:

¹ Մարկուսյան Ա.Խ., Ինվեստիցիաների ընդգրկման ձևերի շուրջ, Եր., 1996, էջ 39, նույնը՝ Кочмола К.В. "Инвестиционная деятельность коммерческих банков", 1990, 140 с.: